

561

ՔՅԱՅԷՍ ՕՂԱՆՉԱՆԵԱՆ

БИБЛИОТЕКА

Главнаго Управленія

по дѣламъ печати.


№ 1077

# „ԵՍՊԵՐԱՆՏՕ“

## ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ԼԵՂՈՒՆ

Ե Ի

ԵՐԵՎԱՆԻ ՍՊԵՍՏՐԱԼԻԲՔ ՄԵԺ ՕԳՈՒՏՆԵՐԸ



408.92

0-45

ԹԻՖԼԻՍ

1909

Тип. „Гуттенбергъ“, уг. Ольгинск. и Слѣщов. № 1.

С 9PM-и  
5988

704-10  
CROSS 30A 0 E

408 05

0-45

ԱՐՏԱՇԷՍ ՕՂԱՆՁԱՆԵԱՆ

# „ԷՍՊԵՐԱՆՏՕ“

**ՄԻՋԱՂԳԱՅԻՆ ԼԵՂՈՒՆ**

Ե Ի

ՆՐԱՆԻՑ ՍՊԱՍԻԵԼԻՔ ՄԵԹ ՕԳՈՒՏՆԵՐԸ



ԹԻՖԼԻՍ

1909

Тип „Гуттенбергъ“, уг. Ольгинск. и Слѣпцов. № 1.

30 AUG 2013

561

«ԻՍՊԻՐԱՆՑՑ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՈՒՆ

Ե Ի

ՆՐԱՆԻՑ ՍՊԱՍԻԵԼԻՔ ՄԵԾ ՕԳՈՒՏՆԵՐԸ

Դեռ շատ շատերը կան, որոնք նոյն իսկ չեն էլ լսել «Էսպերանտո» բառը, չը գիտեն թէ ինչ բան է նա, բայց, մենք հաւատացած ենք, որ նոյն իսկ մի տասնեակ տարուց յետոյ ամբողջ քաղաքակիրք աշխարհում չի գտնւի նոյն իսկ մի մարդ, որ չիմանայ թէ ինչ բան է «Էսպերանտոն», չը գիտենայ խօսել այդ լեզուով:

Մի իսկական միջազգային լեզու ունենալու կարիքը զգացել է 16-րդ դարից: 1881 թւին Շլէյեր աւնունով մի պաստօր, ստեղծեց մի լեզու «Վօլապիլի» անունով, որը պէտք է դառնար միջազգային. բայց երբ 1887 թւի յուլիսի 8-ին Մոսկվայում լոյս տեսաւ մի բրօշուր՝ նոր, միջազգային լեզու «Էսպերանտո»-ի մասին, «Վօլապիլի» դեկավարները ընկան, որովհետեւ այդ լեզուն սովորելը շատ դժւար էր, իսկ «Էսպերանտո»-ն, ընդհակառակը՝ շատ հեշտ: Այնուհետեւ «Էսպերանտո» լեզուն սկսեց տարածւել բոլոր քաղաքակիրթ երկրներում, (մանաւանդ Եւրոպայում և Ամերիկայում) մինչև որ վերջին տարիներս հասաւ նաև մեզ մօտ՝ Կովկաս:

Շատ շատերը մինչև այժմ այն կարծիքի են, որ միջազգային լեզուն, է իբր թէ Փրանսերէնը. բայց այդպէս կարծողները սխալում են, որովհետեւ Փրան-



56321-66

սերէնը միջազգային չէ, այլ դիպլոմատիական. ֆրանս-սերէն լեզուով այժմ թէև խօսում են շատ շատերը քաղաքակիրթ երկրներում, բայց դա չի նշանակի թէ ֆրանսերէնը կարող է միջազգային դառնալ, այսինքն դառնալ այնպիսի լեզու, որով կարողանային խօսալ ամբողջ աշխարհի բոլոր՝ ազգերը, բոլոր ժողովուրդները. որովհետև, ինչպէս ֆրանսերէնը, նոյնպէս և եւրոպական որևէ լեզու սովորելու համար հարկաւոր է նախ՝ մի քանի տարի, բ) երկար համբերութիւն և գ) մեծամեծ ծախսեր, իսկ «էսպերանտօ» լեզուն սովորելու համար հարկաւոր է ընդամենը մի քանի ամիս եւ ամենաչնչին ծախս, այնպէս որ, ֆրանսերէնը կամ եւրոպական որևէ լեզու սովորելը կարող են միայն հարուստները, իսկ իսկական ժողովուրդը չի կարող, որովհետև նա չունի այնքան, որ կարողանայ մի քանի տարի շարունակ տարեկան մի քանի հարիւր բուրլի ծախսել՝ եւրոպական որևէ լեզու կամ «Վօլապիւկ» սովորելու համար:

Ինչո՞ւ ֆրանսերէնը կամ եւրոպական որևէ լեզու սովորելու համար հարկաւոր է մի քանի տարի, իսկ «էսպերանտօ»-ի համար ընդամենը մի քանի ամիս, որովհետև եւրոպական որևէ լեզու, մանաւանդ գերմաներէն և ռուսերէն սովորելու համար սովորողը հանդիպում է ջափազանց դժարութիւնների, իսկ «էսպերանտօ» լեզուն սովորելը, ընդհակառակը՝ շատ հեշտ է, նոյն իսկ այնքան հեշտ, որ լսողները գուցէ չը հաւատան: Այդ չափազանց հեշտութիւնը ընթերցողին ցոյց տալու համար կարևոր եմ համարում այստեղ առջ րեբել մի քանի մանրամասնութիւններ. —

1) Տառերը նման են ֆրանսիականին կամ լատինականին, բացառութեամբ 6 տառի, այն է՝

ĉ — կարգացում է «չ», ĝ — «ջ», ĵ — «ժ», ĥ — «խ», ŝ — «շ», ŭ — «ու» (կարճ):

2) Իւրաքանչիւր բառ կարգացւում է այնպէս, ինչպէս գրւած է:

3) Շեշտը միշտ գտնւում է նախադերձին վանկի վրայ:

4) Գոյական անունները (имя существительное) բոլորն էլ վերջանում են միատեսակ՝ այն է օ տառով:

5) Ածական անունները (имя прилагательное) բոլորն էլ վերջանում են միատեսակ՝ այն է а տառով:

6) Բայերը (глаголь), անորոշները բոլորն էլ վերջանում են միատեսակ՝ այն է i, ներկայ ժամանակը՝ բոլորն էլ as, անցիակը՝ բոլորն էլ is, ապառնին՝ բոլորն էլ os, պայմանականը՝ բոլորն էլ us, հրամայականը՝ բոլորն էլ u տառով:

7) Մակբայերը (нарѣчіе) բոլորն էլ վերջանում են միատեսակ՝ e տառով:

8) Հոլովներ ունի ընդամենը 2—ուղղական և հայցական. սեռական հոլովի համար բառի սկզբում աւելացնւում է de, տրականինը՝ al, գործիականինը՝ per, ներգոյականինը՝ pri:

9) «էսպերանտօ»-ի քերականութիւնը, այսպէս անւանւած ԳТИМОЛОГИЯ-ն, սովորելը ընդամենը 1 օրւայ գործ է՝ եթէ մարդ ուզենայ:

10) «էսպերանտօ»-ն բոլորովին ազատ է СИНТАКСИՅ՝ ունենալուց:

11) Տողադարձի վերաբերմամբ «էսպերանտօ»-ն

ազատ է որևէ կանոն ունենալուց. բառը տողի վերջում որակի էլ որ վերջանայ, թէկուզ մի տառ էլ մընայ, դարձեալ կարելի է անցկացնել միւս տողը:

12) Սովորելով «Էսպերանտո»-ի քերականութիւնը և ընդամենը մի երկու հարիւր բառ, դուք քերականութեան միջոցով կարող էք կազմել մի քանի հարիւր նախնդասութիւններ, կամ թէ ուրիշ խօսքերով 1—2 ամսից յետոյ, դուք, թէև փոքրիկ անճշտութիւններով, բայց և այնպէս կը կարողանաք զրել նամակներ, կատարել հասարակ թարգմանութիւններ փոքրիկ կտորներով, զրել ձեր տպաւորութիւնները, և այլն:

Այս բոլորը գրելու համար դուք այնքան էլ նեղութիւն չէք կրի, որովհետև քերականութեան շնորհիւ դուք առանց բառարանի և ազանց նեղութիւն պատճառելու ուսուցչին, ձեզ ու ձեզ կը կարողանաք իմանալ շատ բառեր. օրինակ, եթէ գիտէք թէ ինչպէս պէտք է ասել «տաք» (varma—վարմա), դուք քերականութեան միջոցով կարող էք իմանալ թէ ինչպէս պէտք է ասել շատ տաք, քիչ տաք, աւելի տաք, չափազանց տաք, տաքութիւն, տաքանալ, տաքացնել, տաք կերպով, շատ տաք կերպով, աւելի տաք կերպով, չափազանց տաք կերպով, ջերմող, ցուրտ, աւելի ցուրտ, քիչ ցուրտ, շատ ցուրտ, չափազանց ցուրտ, ցրտութիւն, ցրտել, հովացնել, սառն կերպով, աւելի սառն կեղտով, շատ սառն կերպով, չափազանց սառն կերպով, մրսել, մրսկան, և այլն:

Իմանալով «շարել» (komposti—կոմպօստի) բառը, դուք ինքներդ կարող էք իմանալ թէ ինչպէս պէտք է ասել գրաշար, գրաշարուհի, գրաշարուհու ամուսին, գրաշարի կին, գրաշարանոց, գրաշարների կառուվա-

րիչ շարող, ցրտող, մասնագէտ ցրածք անող, ցրուողուհի, գրաշարագետ, գրաշարագետուհի, և այլն:

Իմանալով «հայր» (patro—պատրօ) բառը, դուք ինքներդ կարող էք իմանալ թէ ինչպէս պէտք է ասել մայր, հայրաբար, հայրական, մայրենի, մայրաբար, հայրենիք, մայրագետ, և այլն:

Եւ այդպէս անվերջ...

Ընթերցողը դուցէ կասկածի թէ մենք չափազանցացնում ենք «Էսպերանտո»-ի հեշտութիւնը. ընթերցողին այդ կասկածից գուրս բերելու համար մենք կառաջարկենք մեր յարգելի ընթերցողին բացել «Էսպերանտո» միջադպշին լեզւի հեղինակ դօկտօր Լ. ԶԱՄԵՆՀՕՅ-ի «Ekzercaro de la lingvo internacia «Esperanto» ձեռնարկի 43-րդ երեսը, որտեղ նա կը տեսնի թի ինչպէս մի՛ sano բառից կազմւած է 52 բառ և դեռ աււած է k. t. p., որ նշանակում է եւ այլն:

«Էսպերանտո» լեզւի հեշտութեան մասին Մոսկվայի համալսարանի պրօֆէսօր պ. Ռօման Բրանդտ, որը գիտէ աւելի քան 15 լեզու, «La ondo de «Esperanto» թերթի № 1-ում ասում է, որ բոլոր լեզուներից ամենից հեշտը «Էսպերանտո»-ն է և քիչ յետոյ աւելացնում «արտասահմանեան մի քանի լեզուներ իմացողը կարող է հասկանալ «Էսպերանտո» լեզուով համարեայ ջը սովորած». իսկ ես դրանից աւելին կասեմ — ծանօթներիցս մէկի մօտ գտնւած ժամանակ, երբ «Էսպերանտո» լեզւի տետրակներս պատահամար գըտընւում էին մօտս, ծանօթս հետաքրքրեց դրանցով և ես կարդացի 2 կտոր իմ գրածներից. ծանօթս բոլորն էլ թարգմանեց բառ առ բառ և առանց սխալի և երբ զարմացմամբ հարցրի թէ «եթէ Դուք «Էսպերանտո»-ն

չը գիտէիք, ի՞նչպէս կարողացաք ճշտութեամբ թարգմանել», նա պատասխանեց. «Էսպէրանտո»-ն չգիտեմ, բայց Ֆրանսերէն գիտեմ, գերմաներէն գիտեմ, բառերի արմատները նման են իրար»:

Որովհետեւ ներկայումս մարդկանց մեծ մասը, ընդհանրապէս, մի որև գործի ձեռնարկելիս ամենից առաջ ի նկատի է ունենում իր անձնական շահը, այդպէս և այս հարցում, երևի ամենից առաջ հարց կտան — ի՞նչ օգուտ կլինի մեզ «Էսպէրանտո» լեզուն սովորելուց: Այդ հարցին պատասխանելու համար համառօտակի կերպով կարող եմ ասել, որ «Էսպէրանտո»-ի սովորելը անհրաժեշտ և օգտաւէտ է ոչ միայն ճանապարհորդներին, այլ նաև վաճառականներին, ժողովրդի կեանքով, հասարակական հարցերով հետաքրքրուողներին, մանաւանդ գրականութեամբ պարագողներին և ընդհանրապէս, մամուլի հետ գործ ունեցողներին: Օրինակի համար, դուք գրող էք, գրում էք մի վէպ, տպել էք տալիս 1000, 2000 կամ ամենաշատը 3000 օրինակ և այդքան փոքր քանակութեամբ տրւածներն էլ մեծ մասամբ չեն ծախուում, փշանում են թողբրի մէջ, մնում են գրավաճառանոցներում ընկած, երկար ու ձիգ ամիսներով, նոյն իսկ տարիներով, հետևանքը լինում է այն, որ դուք ստիպւած էք լինում վերջ ի վերջոյ ծախել ձեր տպած գրածքները փթերով, իբրև հասարակ թուղթ, գրեանքան 2—3 կոպէկով, կամ թէ ուրիշ խօսքերով, դուք օգուտ ստանալու փոխարէն մնասուում էք, իսկ երբ «Էսպէրանտո»-ն կը տարածւի ամբողջ աշխարհում և դուք ձեր հեղինակութիւնները կամ թարգմանութիւնները կը կատա-

րէք «Էսպէրանտո» լեզուով, դուք տպել կտաք ոչ թէ 1000—3000 օրինակ, այլ միլիոնաւոր օրինակներով, — որոնք և կսպառեն ամենակարճ ժամանակում — որովհետև այն ժամանակ ձեր գրածքները անելու հնարաւորութիւն կունենան ամբողջ աշխարհի բոլոր գրագէտները, որովհետև նրանք այն ժամանակ հասկանալիս կը լինեն ձեր գրածքի կամ թարգմանութեան լեզուն. իսկ այժմ, երբ որևէ գրող որևէ գրածք գրում է իւր մայրենի լեզուով, այդ գրածքը կարող է համարեայ թէ միայն այն ազգի կամ ժողովրդի ընթերցասէր մասը, որի լեզուով գրած է աշխատութիւնը. այնպէս որ, եթէ մենք մի փոքր հետատեսութեամբ գիտելու լինենք, կը տեսնենք, որ «Էսպէրանտո» լեզուն զայն է կատարելու այն հսկայական դերը, ինչ դեր որ ջրկարողացաւ կատարել նոյն իսկ Գուտտեմբերգի նշանաւոր գիւտը՝ տպագրական մեքենան:

Դեռ միայն Ռուսաստանում մամուլի հետ գործ ունեցողներին (վիպագրողներ, խմբագիրներ, բանաստեղծներ, աշխատակիցներ, թղթակիցներ, սրբագրիչներ, թարգմանողներ, հրատարակախօսներ, գրաշարներ, ցրէիչներ, տպարանական ծառայողներ, կազմարարներ, գրավաճառներ, լրագիրներ ծախողներ, տպարանատէրեր, ձուլարանատէրեր, ուսուցիչներ, դերասաններ) կարելի է հաշուել մի քանի միլիօն. «Էսպէրանտո»-ի շնորհիւ ծաղկելով գրականութիւնը, աճելով ժողովուրդների մտաւոր զարգացումը և կրթութիւնը, հետևաբար, դուզահետաբար կաճի նաև վերոյիշեալ մի քանի միլիօն անձանց զբաղմաների մէջ եղած փողերի քանակութիւնը, հետևաբար նրանք կունենան մարդավայել կեանք և շատ փող. իսկ այդ զէպ-

քում, բնականաբար կառավարելի նաև թատրոնի, ուսումնարանների և գրադարանների գործը, իսկ այդքան մարդիկ մարդավայել ապրուստ ունենալուց յետոյ, բնականաբար կը ծաղկի նաև առևտուրը, կամ թէ ուրիշ խօսքերով «էսպէրանտո»-ն պալիս է աւետելու բոլոր թշուառներին և կիսաքաղցածներին նրանց ապագայ բարօրութեան՝ կուշտ փորով ապրելու մասին... այնպէս որ, բոյոր մարդիկ, մանաւանդ վերոյիշեալ դասակարգերին պատկանողները, քեկուզ հենց իրենց անձնական շանի՝ մօտակայ բարօրութեան տեսակետից, պետք է ամեն կերպ աշխատեն, որ «էսպէրանտո» լեզուն տարածւի որքան կարելի է շուտ եւ մեծ ծաւալով:

Ինչպէս ամեն մի նոր լեզու, այնպէս էլ «էսպէրանտո» լեզուն սովորելու ժամանակ, սկզբներում թուում է տարօրինակ, այնպէս որ, շատերը զրւելով, մէկ, երկու կամ երեք անգամ դասերին ներկայ լինելուց յետոյ, կարծելով թէ չեն կարող սովորել, կարծելով թէ իրենց խելքի բանը չի, թողնում, հեռանում են. ընդհանրապէս այդպիսի տպաւորութիւն է ստացւում, երբ մարդ ուզում է սովորել որևէ նոր լեզու. այդպէս կարծողները և հեռացողները սաստիկ սխալւում են: Սկզբում, «էսպէրանտո»-ն ինձ վրայ ևս թողեց այդպիսի տպաւորութիւն, բայց բառերին ընտելանալուց յետոյ ոչ միայն չբացաւ այդ ստացւած սխալ տպաւորութիւնը, այլ հետզհետէ սիրանարեցի «էսպէրանտո» լեզւի վրայ և սկսեցի զբաղել թարգմանութիւններ կատարելով:

Մեզ փնում է պատասխանել և այն կարճատեսներին ու թերահաւատներին, որոնք հեռատեսութեամբ չդիտելու կամ հանգամանքներին ծանօթ չլինելու պատճառով կարծիք են յայտնում թէ «էսպէրանտո»-ն չի կարող համաշխարհային դառնալ: Մեր առաջն է դըրւած «էսպէրանտո»-ի պրօպագանդի թերթիկը, որը հարդեղով հոնդերձ՝ թէ էսպէրանտիզմին են յարել ի միջի այլոց Շվեդական ժուժկալութեան ընկերութիւնը իր 600,000 անդամներով, Ֆրանսիական Կարմիր Սաշի Ընկերութիւնը, ամբողջ աշխարհին յայտնի Ֆրանսիական տուրիստների կլուբը, և այլն, և այլն, յայտնում է թէ, մինչև այդ օրերը, այսինքն մինչև 1907 թւի յուլիսը՝ էսպէրանտիզմի ծնունդ առնելուց մինչև 20 տարի յետոյ, ամբողջ աշխարհում եղել են 32 էսպէրանտիստական թերթեր և 400 էսպէրանտիստական ընկերութիւններ, իսկ այդ օրից մինչև այսօր, համարեա 2 տարի յետոյ էսպէրանտիստական թերթերի թիւը հասել է աւելի քան 80-ի, իսկ ընկերութիւնների թիւը՝ մօտ 1400-ի: Ի՞նչ է նշանակում սա: Համեմատեցէք այս թւերը և այն ժամանակ դուք կը տեսնէք, որ պերճախօս փաստը թերահաւատների կարծիքի բոլորովին հակառակն է ասում: Մինչև 20 տարի՝ 400, իսկ 2 տարի յետոյ մօտ 1400: Սա արդէն արեգակի լոյսի նման մի պարզ ճշմարտութիւն է, որ «էսպէրանտո»-ն արդէն մտել է իւր առաջընթացութեան երկրորդ շրջանը... Ընդհանրապէս ամեն մի նոր սկսող գործ, իւր առաջընթացութեան ժամանակում ունենում է 3 շրջան. առաջին շրջանում նա առաջանում է շատ դանդաղ, երկրորդ շրջանում՝ արագ, իսկ երրորդ շրջանում՝ շատ արագ: Նոյն իսկ երկաթուղին, երբ ըս-

կըսում է շարժել, առաջին շրջանում նա առաջանում է կրիայի քայլերով. երկրորդ շրջանում նա առաջանում է ձիու քայլերու արագութեամբ, իսկ երրորդ շրջանում արդէն սլանում է ինչպէս արծիւ: Այդպէս է եղել և «էսպերանտո»-ն: Առաջին 20 տարին եղել է «էսպերանտոյ»-ի առաջին շրջանը. նա այդ շրջանում քայլել է կրիայի քայլերով. այժմ նա ապրում է երկրորդ շրջանում, իսկ մի քանի, գուցէ 4—5 տարուց յետոյ նա կը մտնի երրորդ շրջանը՝ առաջ ընթանալու ինչպէս երկաթուղի՝ շատ կարճ ժամանակում ծաւալելու և էսպերանտիզմով ողողելու ամբողջ աշխարհը...

Մեր այս կարծիքի մէջ ոչ մի կասկած չունենք, որովհետև այդպէս է ասում պերճախօս փաստը.—վերջերէք «La ondo de esperanto» թերթի № 3-ը և դուք կը տեսնէք, որ մինև 1909 թւի մարտի 1-ը ամբողջ աշխարհում եղել են 1327 էսպերանտիստական ընկերութիւններ. իսկ վերջին օրերս ստացւած «Esperanto» երկշաբաթաթերթի № 60-ից իմանում ենք, որ, Բարցիլօնայում, «Dum ses tagoj okazis 4 kursoj ĉiumatene kaj 2 ĉiuvespere (ոչ-բառացի, այլ մտքի թարգմանութիւնը՝ «6 օրոյ ընթացքում կազմեցին 4 կուրսեր ցերեկայ և 2-ը գիշերայ)»:

Այլ ևս մնում է որևէ կասկած, որ «էսպերանտո»-ն չը պէտք է ընդգրկի ամբողջ աշխարհը, ամենսուըր թէկուզ 10 տարուց յետոյ...

Լուսաւոր, երիտասարդ եւրոպայում կազմւում է օրական մէկ էսպերանտիստական ընկերութիւն, իսկ պառաւ Ասիան դեռ նոր արթնացած իւր բազմադարեան քնից, տրորում է իւր աչքերը և սարսափով տեսնում թէ որքան յետ է մնացել եւրոպայից ու միւս

երկրներից, (որտեղեքում, նոյն իսկ վայրերի համարած կենտրոնական Աֆրիկայում կան էսպերանտիստական ընկերութիւններ) և այժմ, տեսնելով էսպերանտիզմի կենսատու ճառագայթները, ինքը (Ասիան) ևս դիմում է դէպի այդ փրկարար ուղին, քայլեր է անում կուլտուրայէս հետզհետէ հաւասարելու լուսաւոր երկրներին:

Ասիական երկրներից Չինաստանում, մանաւանդ Ենպօնիայում էսպերանտիստական ընկերութիւններ եղել են վաղուց (ուր հրատարակւում են նաև թերթեր «էսպերանտո» լեզուով). Ռուսաստանում կան էսպերանտիստական ընկերութիւններ առայժմ բոլոր յայտնի քաղաքներում. նոյն իսկ Փոքր-Ասիայի մի քանի քաղաքներում և Թուրքեստանի խորքերում՝ Տաշկենտում արդէն մտել է «էսպերանտո»-ն, իսկ մեզ մօտ, Կովկասում, էսպերանտիստական ընկերութիւններ կան առայժմ հետեւեալ քաղաքներում—Թիֆլիս, Բագու, Բաթում, Ալեքսանդրապօլ, Գանձակ, Կարս, Վլադիկավկազ:

էսպերանտիզմով այժմ հետաքրքրւում են Կովկասեան նոյն իսկ գիւղերում և պահանջում Թիֆլիսից «էսպերանտո»-ի ձեռնարկներ. (ինչպէս օրինակ, Երեւանի նահանգի Դաւալու գիւղը):

Շատ ցանկալի էր որ Կովկասեան միւս տեղերում, մանաւանդ Երևան, Վաղարշապատ, Նախիջևան, և այլն, շուտով հիմնեն էսպերանտիստական ընկերութիւններ՝ յետ չը մնալու իրենց համաերկրացիներից... «էսպերանտո»-ի ուսուցումը եւրոպական շատ քաղաքների դպրոցներում արդէն դարձել է պարտադիր. Թիֆլիսում դասաւանդւում է նաև առևտրական դպրոցում.

Ռուսաստանի դպրոցներում թոյլատրւած է սովորել, միայն, առայժմ կամովին, իսկ հայկական դպրոցներում...

Կասկած չըկայ, որ, վաղ թէ ուշ, «Էսպէրանտօն» պէտք է պարտադիր դառնայ նաև հայոց դպրոցներում, ուստի, մենք կարող ենք տալ բարեկամական, ընկերական խորհուրդ մեր բոլոր ուսուցիչներին և վարժուհիներին շուտով սովորել «Էսպէրանտօ»-ն ժամանակին անպատրաստ չը գտնւելու համար: Թիֆլիսում գտնւող ուսուցիչներին ու վարժուհիներին յարմար է գալ կուրսերում սովորելու, իսկ դաւառականներին աւելի յարմար է ձեռք բերել «Էսպէրանտօ»-ի ձեռնարկներ, իսկ ամառը գալ Թիֆլիսի կուրսերը գործնականապէս վարժւելու:

Թիֆլիսում «Էսպէրանտօ»-ի կուրսերը գտնւում են Գոլօվինսկի պրօսպեկտի վրայ գտնւող I գիմնազիայի շինութեան մէջ. (ուսական տաճարի դէմ ու դէմը). դասերը շուտով կը սկսեն և դասախօսութիւնները տեղի կունենան կիրակի օրերը, առաւօտեան ժամ 11—12-ը: Կուրսի վճարն է ընդամենը 1 ռուբլի: Մերաքանչիւր կուրսը տևում է մօտ 4 ամիս: Ուսուցումը և դասախօսութիւնները տեղի են ունենում սրահներէն լեզուով. այնպէս որ, այն բոլորը, որոնք հասկանում են սրահներէն խօսակցութիւնը և քերականութիւնից գիտեն գոնէ ЭТИМОЛОГИЯ-ն, կարող են գալ՝ գըրւել, սովորել, որոնք մի քանի դասի ներկայ լինելուց և դասերը սովորելուց յետոյ, թէև փոքրիկ անճշտութիւններով, բայց և այնպէս կը կարողանան նոր լեզուով գրել նամակներ, թղթակցութիւններ, իրենց տպաշորութիւնները, և այլն: Ռուսերէն չիմացողների հա-

մար բացւելու է նաև հայկական բաժին՝ որտեղ «Էսպէրանտօ»-ն դասաւանդելու են հայերէն լեզուով. իսկ նրանք, որոնք ծանօթ են եւրոպական լեզուների հետ, նրանք, որոնք գիտեն ֆրանսերէն և գերմաներէն, մենք նրանց նոյն իսկ խորհուրդ էլ չէինք տայ գալ կուրսերը սովորելու այլ, բաւական է տանը 1—2 անգամ կարգալ «Էսպէրանտօ»-ի ձեռնարկը և լեզուն արդէն սովորած կը լինեն:

Իբրև ձեռնարկ, աշնանային այս սեզօնի համար, որպէս լաւագոյնը մինչև այժմ եղած ձեռնարկներից ընդունւած է «Էսպէրանտօ-ն տաս դասի ընթացքում» սրահներէն և հայերէն. կարելի է ձեռք բերել «Էսպէրանտօ»-ի կուրսերում:

Թիֆլիսի էսպէրանտիստական կուրսերում սովորողներից մեծամասնութիւնը կազմում են, բարբախտաբար, հայերը. այս հանգամանքը դառնում է ապացոյց հայերի կուլտուրականութեան. Թիֆլիսի էսպէրանտիստական կուրսերում մինչև այժմ եկել գրել են սովորելու համար և՛ հայ, և՛ ռուս, և՛ վրացի, և՛ հրէայ և այլն, բայց մինչև այժմ չէ գրել թէկուզ մի թուրք. այս հանգամանքը աչքի է ընկնում այն պատճառով, որովհետև թուրքերը Թիֆլիսում կազմում են աչքի ընկնող թիւ. մենք հաւատում ենք թուրք ժողովրդի կուլտուրականութեան և սիրում ենք յուսալ, որ Թիֆլիսի թուրք ինտելիգենցիան կառաջնորդի իւր ժողովրդին դէպի լոյս, դէպի էսպէրանտիզմի լուսաճաճանչ ճառագայթները՝ անմասն չը մնալու նրա բարիքներից. իսկ այդ նպատակին հասնելու համար, հարկաւոր է որ Թիֆլիսի թուրք ինտելիգենտներից գոնէ մի քանի

հողի գան, գրեն և սովորեն «էսպերանտո» լեզուն, իսկ սովորելուց յետոյ հրատարակեն էսպերանտերէն-առսերէն ձեռնարկ իւր բառարանով, այնուհետև կա-րելի կը լինի ասել, որ թուրք ժողովուրդը ևս գուրկէ չի մնայ էսպերանտիզմից սպասուող անուրանալի բա-րիքներէց:

Ուրեմն ամենքն էլ, առանց խտրութեան դասա-կարգերի և ազգութեան, թող շտապեն գրել, սովորել, իսկական դասերը սկսելու են սեպտ. 20-ից, թէև կա-րելի է գրել և 1, 2, 3 շաբաթից յետոյ ևս, բայց սո-վորողների համար շատ ցանկալի կը լինէր որ բաց չը թողնէին թէկուզ մի գաս, որովհետև նոյն իսկ մի դաս բաց թողնելն էլ ազգում է ուսման ընթացքի վրայ: Եւ անշուշտ, ով հասկանում է իր օգուտը, նա կը գայ, կը գրուի, կը սովորի...



«Ազգային գրադարան»



NL0232253

С 2111  
5988

ԳԻՆՆ Է Յ ԿՈՊԵԿ

Գուժարով գնողներին 20<sup>0</sup>/<sub>0</sub> զիջում:  
Պահեստը «Գուժարներբերդ» գրավաճառանոցում:  
Հասցեն՝ Тифлисъ, книжный магазинъ „Гут-  
тембергъ“.